**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ թիվ 1**
**14.02.2022թ. կնքված N ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2022/1ՏՀ տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի**

ք. Երևան «27» «12» 2022թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Քարտաշյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 14.02.2022թ. կնքված N**ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2022/1ՏՀ** պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 22-ի N 2054-Ն որոշումը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

**Կողմերը որոշեցին՝**

1.1 2022 թվականին իրականացվելիք ծառայությունների գինը նվազեցնել **15 967 000** (տասնհինգ միլիոն ինը հարյուր վաթսունյոթ հազար) ՀՀ դրամով, որի արդյունքում 2022 թվականին իրականացվելիք ծառայությունների գինը **79 300 000** (յոթանասունինը միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամի փոխարեն կկազմի **63 333 000** (վաթսուներեք միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

1.2 Հաստատել Համաձայնագրի 2022թ նոր Վճարման ժամանակացույցը համաձայն՝ Հավելված 1-ի:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

**3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն | «Ճաննախագիծ ինստիտուտ» ՍՊԸ |
| ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, | ՀՀ, ք.Երևան, Աճառյան 54բ |
| ՀՀ կենտրոնական գանձապետարան | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| ՀՀ 900011002632 | ՀՀ 2050022451291001 |
| ՀՎՀՀ 02815457 | ՀՎՀՀ 00813453 |
| գլխավոր քարտուղար | Տնօրեն |
| Ա. Երիցյան | Դ. Քարտաշյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հաստատված է
N ՏԿԵՆ-ՄԱ-ԾՁԲ-2022/1ՏՀ գնման պայմանագրի
«27» «12» 2022թ. կնքված
Թիվ 1 Համաձայնագրով
Հավելված թիվ 1

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

## Տ-8-93.Լծեն-Տաթև տեղական նշանակության կմ 0+000կմ- կմ19+889 հատվածի վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայություններ

(ՀՀ դրամ)

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Գնման ենթակա աշխատանքների անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը տարի |
| 1 | 71351540/2 | Տեխնիկական հսկողության ծառայություններ | — | 7 930 001 | 7 930 001 | 7 930 001 | 55 510 000 | 55 510 000 | 55 510 000 | 63 333 000 | 63 333 000 | 63 333 000 | 63 333 000 | 63 333 000 | 63 333 000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011002632
ՀՎՀՀ 02815457
գլխավոր քարտուղար
Ռ. Սիմոնյան

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Ճանապարհ ինստիտուտ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Աճառյան 54բ
«Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՀ 2050022451291001
ՀՎՀՀ 00813453
Տնօրեն
Դ. Քարտաշյան

(ստորագրություն)
Կ.Տ.